Վահան Տերյան

Դու անուն չունես, քեզ ինչպես կանչեմ

Դու անուն չունես, քեզ ինչպես կանչեմ,
Եվ ուղի չըկա երկիրըդ գալու.
Տխուր երգերըս որքան էլ հնչեն,
Որքան էլ հնչեն, քեզ չեն հասնելու:

Ոչ հըմայական աղոթքներ և ոչ
Նվագներ գիտեմ, որ սիրտըդ դյութեմ,
Հլու է կամքիդ իմ սիրտը դողդոջ,
Իմ սիրտը բաց է քո նիզակի դեմ:

Փոված եմ ահա քո գեղեցկության,
Քո անքննելի կարողության դեմ.
Լուսավորի՛ր սև համրությունն իմ տան.
Ամբողջ աշխարհը քո ցոլքն է արդեն:

Հայտնվի՛ր անհուն փայլով ու փառքով,
Ժպիտըդ փռիր իմ երկրի մթնում.
Տանջի՛ր ինձ վերջին քաղցր տանջանքով,
Քեզ գո՛վք, քեզ օրհնե՛նք, քեզ փա՛ռք անհատնում…